ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 286 -Ա

«ԿԱՊԱՆԻ ԱԼ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014թ. հունիսի 13-ի N 98-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետը՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել «Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Մերի Գանդալյան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի վարչության պետ
Անահիտ Հովհաննիսյան	Մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ
Անուշ Սիմոնյան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
Արուս Ղազարյան	«Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն
Լուսինե Զաքարյան	«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի տնօրեն

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի վարչության պետ Մերի Գանդալյանին, քարտուղար՝ անձնակազմի կառավարման բաժնի պետ Անահիտ Հովհաննիսյանին :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2020թ. դեկտեմբերի 17
ք. Կապան

Ս. ՊՈՂՈՍՅԱՆ